



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. մարտին /վերլուծություն/

2004թ. մարտին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 8587 գործարքներ, որոնց քանակը 2003թ. մարտի համեմատ աճել է 71.4%-ով, իսկ 2004թ. փետրվարի համեմատ՝ 19.8%-ով:

2004թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3494 օտարման գործարքների 93.0%-ը կազմել են առուվաճառքները, 6.4%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 40.9%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 44.3%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. մարտին, 2003թ. մարտի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 45.9%-ով, իսկ 2004թ. փետրվարի համեմատ՝ 13.4%-ով: 2004թ. մարտին Երևան քաղաքում անշարժ գույքի 1299 առուվաճառքի գործարքների 69.6%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում քաղաքում, 2003թ. մարտի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 45.3%-ով, իսկ 2004թ. փետրվարի համեմատ՝ 17.7 %-ով:

2004թ. մարտին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

/1 ԱՄՆ դոլարը 2004թ. մարտին համարժեք է 563 դրամի /

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. մարտին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		մարտ 2003թ.	մարտ 2004թ.	փետրվար 2004թ.
Կենտրոն	250.0-970.0	375.3	435.1	427.2
Արաբկիր	200.0-560.0	262.4	340.0	335.2
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	149.4	207.2	206.0
Նոր-Նորք	115.0-250.0	128.3	171.6	169.2
Ավան	120.0-190.0	117.2	161.0	159.1
Էրեբունի	120.0-300.0	132.7	171.2	170.1
Շենգավիթ	120.0-250.0	127.6	185.4	180.1
Դավթաշեն	130.0-260.0	142.8	205.0	203.0
Աջափնյակ	120.0-250.0	125.9	183.4	180.0
Մալաթիա-Սեբաստիա	120.0-250.0	126.6	184.3	179.1
Նուբարաշեն	65.0-100.0	61.6	72.3	72.3
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	<b>65.0-970.0</b>	<b>159.1</b>	<b>210.6</b>	<b>207.4</b>

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. մարտին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 1.5%, իսկ տարեկան աճը՝ 32.4 %, ընդ որում ամսական միջին աճի տեմպի ցուցանիշը կազմել է 0.017:

2004թ. մարտին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 510 բնակարաններ, որոնց քանակը 2003 մարտի համեմատ աճել է 37.5%-ով, իսկ 2004թ. փետրվարի համեմատ՝ 11.1%-ով:

2004թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների

վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. մարտին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			մարտ 2003թ.	մարտ 2004թ.	փետրվար 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	61.8	63.2	63.1
	Ապարան	18.0-40.0	26.9	29.0	27.4
	Թալին	18.0-40.0	24.5	27.0	25.2
Արարատ	Արտաշատ	22.0-88.0	53.3	55.8	54.8
	Մասիս	20.0-90.0	53.7	55.7	54.5
	Վեդի	20.0-45.0	30.9	33.7	31.7
	Արարատ	22.0-50.0	31.0	33.0	31.6
Արմավիր	Վաղարշապատ	35.0-102.0	82.2	86.0	85.0
	Արմավիր	21.0-58.0	44.5	46.8	45.8
	Մեծամոր	17.0-50.0	30.5	31.0	30.9
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	30.5	31.7	30.7
	Գավառ	20.0-50.0	29.9	31.5	30.5
	Մարտունի	18.0-38.0	28.9	30.0	29.7
	Վարդենիս	10.0-21.0	16.8	17.3	17.3
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	59.9	62.0	62.2
	Ստեփանավան	20.0-48.0	32.9	33.5	33.4
	Սպիտակ	17.0-40.0	23.5	29.0	24.1
	Այվերդի	15.0-40.0	25.1	25.8	25.6
	Տաշիր	15.0-28.0	18.9	21.0	19.4
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	81.7	84.5	84.5
	Նոր Հաճն	35.0-75.0	50.9	55.0	52.3
	Բյուրևան	15.0-45.0	34.9	36.2	35.2
	Եղվարդ	28.0-55.0	39.8	42.7	40.7
	Հրազդան	18.0-55.0	29.8	34.2	31.2
	Ծաղկաձոր	22.0-95.0	74.5	75.9	75.8
	Չարենցավան	13.0-55.0	30.2	34.0	31.1
Շիրակ	Գյումրի	30.0-100.0	63.5	72.1	72.1
	Արթիկ	17.0-45.0	24.9	27.0	25.3
	Մարայիկ	15.0-33.0	22.9	25.1	23.7
Սյունիք	Գորիս	21.0-45.0	29.0	31.0	29.8
	Կապան	18.0-52.0	28.1	31.0	29.6
	Սիսիան	17.0-37.0	27.0	30.0	27.6
	Մեղրի	18.0-58.0	24.9	25.3	25.2
	Քաջարան	13.0-30.0	18.2	18.5	18.5
Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	34.7	35.3	35.4
	Եղեգնաձոր	20.0-58.0	44.5	47.0	47.0
	Զեյրուկ	18.0-50.0	40.1	41.1	41.2
Տավուշ	Դիլիջան	15.0-54.0	35.9	36.2	36.2
	Իջևան	23.0-60.0	40.1	42.0	40.4
	Բերդ	15.0-43.0	28.5	29.3	29.3
	Նոյեմբերյան	15.0-45.0	26.5	26.7	26.8

2004թ. մարտին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի տների բնակարանների միջին գների ամսական աճը կազմել է 2.6%, իսկ տարեկան աճը՝ 5.3% :

2004թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 602 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 127 , մյուս մարզերում միասին վերցրած՝ 475: 2004թ. փետրվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 23.9%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 30.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 22.1%-ով: 2003թ. մարտի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 73.5%-ով, ընդ որում Երևանում՝ 25.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 93.1%-ով:

2004թ. մարտին Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. փետրվարին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		մարտ 2003թ.	մարտ 2004թ.	փետրվար 2004թ.
Կենտրոն	255.0-990.0	377.0	448.9	443.1
Արաբկիր	205.0-580.0	265.0	340.5	336.5
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	151.0	209.8	207.7
Նորք-Մարաշ	120.0-340.0	286.0	324.4	320.6
Ավան	125.0-200.0	119.0	162.0	160.7
Էրեբունի	130.0-320.0	134.0	172.5	171.3
Շենգավիթ	120.0-260.0	129.0	186.0	181.8
Դավթաշեն	140.0-260.0	144.0	206.6	204.6
Աջափնյակ	125.0-230.0	128.0	183.8	181.8
Մալաթիա-Սեբաստիա	125.0-230.0	129.0	184.8	180.2
Նուբարաշեն	65.0-110.0	62.0	74.1	74.0
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	<b>65.0-990.0</b>	<b>174.9</b>	<b>226.7</b>	<b>223.8</b>

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2004թ. մարտին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 1.3%, իսկ տարեկան աճը՝ 29.6%:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. մարտին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			մարտ 2003թ.	մարտ 2004թ.	փետրվար 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	35.0-100.0	81.8	83.2	83.2
	Ապարան	20.0-55.0	38.1	38.9	38.9
	Թալին	15.0-40.0	27.7	28.1	28.1
Արարատ	Արտաշատ	28.0-85.0	61.1	61.9	61.9
	Մասիս	27.0-88.0	61.5	62.7	62.7
	Վեդի	25.0-60.0	35.9	36.3	36.3
	Արարատ	25.0-60.0	36.8	37.6	37.6
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	88.0	90.0	90.0
	Արմավիր	35.0-90.0	51.6	52.5	52.5
Գեղարքունիք	Սևան	25.0-60.0	36.1	36.4	36.4
	Գավառ	25.0-65.0	39.4	39.9	39.9
	Մարտունի	20.0-55.0	33.5	33.9	33.9
	Վարդենիս	15.0-45.0	20.8	21.3	21.3
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	67.0	69.2	69.2
	Ստեփանավան	20.0-50.0	32.6	33.7	33.7
	Սպիտակ	17.0-50.0	23.8	29.1	25.1
	Այվերդի	18.0-50.0	25.4	26.0	26.0
	Տաշիր	15.0-30.0	19.4	21.1	19.9
Կոտայք	Արույան	40.0-110.0	90.9	92.8	92.8
	Նոր Հաճն	35.0-80.0	53.6	55.1	54.2
	Բյուրևական	15.0-50.0	38.0	38.2	38.2
	Եղվարդ	23.0-70.0	46.8	47.4	47.4
	Հրազդան	25.0-65.0	39.4	40.3	40.3
	Ծաղկաձոր	45.0-110.0	84.4	85.5	85.5
	Չարենցավան	25.0-50.0	32.9	34.1	33.4
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	88.3	91.2	91.2
	Արթիկ	18.0-55.0	27.9	28.7	28.7
	Մարայիկ	15.0-45.0	23.6	25.2	23.9
Սյունիք	Գորիս	22.0-65.0	30.9	31.7	31.7
	Կապան	25.0-55.0	30.6	31.2	31.2
	Միսիան	18.0-50.0	27.9	30.1	28.7
	Մեղրի	15.0-30.0	28.1	28.2	28.2
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	36.3	37.0	37.0
	Եղեգնաձոր	20.0-65.0	48.7	49.3	49.3
	Ջերմուկ	25.0-60.0	42.6	43.4	43.4
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	38.8	39.2	39.2
	Իջևան	30.0-70.0	40.6	42.1	41.3
	Բերդ	20.0-50.0	30.4	30.9	30.9
	Նոյեմբերյան	20.0-50.0	30.6	30.8	30.8

2004թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսական էական աճ չի արձանագրվել (ամսական աճը կազմել է 0.6%), իսկ տարեկան աճը կազմել է 2.5%:

Ընդհանուր առմամբ, 2004թ. մարտին հանրապետությունում օտարվել են 638.05 հա /այդ թվում 18.91 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 585.64 հա կազմել

են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 631.17 հա հողերի /այդ թվում 16.73 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 582.46 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Օտարված 4.88 հա ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ /այդ թվում 0.18 հա Երևանում/, որից 3.18 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Օտարված 2.00 հա ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակման գործարքներ /փոխանակման բոլոր գործարքները իրականացվել են Երևան քաղաքում բնակավայրերի հողերի նկատմամբ/:

Հողերի առուվաճառքների առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում` 253.26 հա, որից 243.90 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2004թ. մարտին մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտև ներառված չեն արդյունաբերական օբյեկտների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/		հասարակական կառուցապատ.				բնակելի կառուցապատ. /տնամերձ/		հասարակական կառուցապատ.	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	6	0.28	7	3.91	0	0.00	62	5.07	5	7.48
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	37	25.46	25	2.24	3	1.59
Արարատ	34	90.28	20	2.17	1	0.30	111	49.19	57	5.42	0	0.00
Արմավիր	2	200.00	0	0.00	0	0.00	61	43.90	29	3.42	2	1.24
Գեղարքունիք	0	0.00	6	0.68	0	0.00	11	4.31	7	0.73	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	33	33.44	1	0.18	2	0.85
Կոտայք	22	72.20	1	0.04	0	0.00	132	31.86	64	7.18	1	0.20
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	27	25.54	7	0.43	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	2	4.45	1	0.12	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	2	0.29	6	1.48	2	0.20	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.34	0	0.00	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>58</b>	<b>362.48</b>	<b>33</b>	<b>3.17</b>	<b>10</b>	<b>4.50</b>	<b>422</b>	<b>219.97</b>	<b>255</b>	<b>24.99</b>	<b>13</b>	<b>11.36</b>

2004թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են հողերի 795 առուվաճառքի գործարքներ, որից 480-ը` գյուղատնտեսական նշանակության, 311-ը` բնակավայրերի, 4-ը արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ:

2004թ. մարտին հողերի առուվաճառքներից 92-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 4-ը` Երևանում /1.48 հա/, իսկ 88-ը` մյուս մարզերում /365.96 հա/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 58 միավորը հանդիսացել է գյուղատնտեսական նշանակության /362.48 հա/, 29-ը` /2.97 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ /, 5-ը` հասարակական կառուցապատման հողեր /1.99 հա/:

2004թ. մարտին հանրապետությունում վաճառվել է 4 միավոր արդյունաբերական օբյեկտների հողեր` Արմավիրի մարզում /4.70 հա /:

2004թ. մարտին, հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքի 480 գործարքներ, այդ թվում աճուրդով 58, դատարանի վճռով 3 գործարքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները` հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախնկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի առուվաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						27	11.76	840.0	10000.0	2570.0
Ապարան								130.0	1150.0	360.0
Թալին						9	12.70	200.0	1680.0	420.0
Ծաղկահովիտ						1	1.00	170.0	2100.0	270.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	33	68.28	170.0	3450.0	946.0	59	20.21	740.0	10000.0	2085.0
Մասիս						11	3.77	400.0	8500.0	1160.0
Վեդի	1	22.0	2390.0	2390.0	2390.0	38	24.51	450.0	7200.0	1300.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						18	11.31	650.0	4650.0	1350.0
Բաղրամյան	2	200.0	204.0	204.0	204.0	13	15.86	130.0	1200.0	485.0
Վաղարշապատ						30	16.73	980.0	14000.0	2280.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						1	0.50	420.0	1100.0	670.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի						1	0.37	100.0	4000.0	750.0
Սևան						5	0.30	100.0	1000.0	385.0
Վարդենիս						4	3.14	60.0	1180.0	270.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						17	17.53	360.0	5500.0	860.0
Գուգարք								500.0	6000.0	1550.0
Սպիտակ						1	0.55	500.0	3300.0	1000.0
Ստեփանավան						11	6.83	180.0	4000.0	455.0
Տաշիր						4	8.53	100.0	400.0	250.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	15	4.20	684.0	854.0	815.0	102	18.95	520.0	14000.0	5350.0
Եղվարդ	7	68.0	135.0	960.0	705.0	23	10.37	380.0	10000.0	3200.0
Հրազդան						7	2.55	250.0	6000.0	810.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						20	19.25	550.0	1200.0	680.0
Ամասիա								80.0	525.0	195.0
Անի						4	2.45	240.0	800.0	280.0
Աշոցք								60.0	210.0	130.0
Արթիկ						3	3.84	140.0	800.0	300.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						1	2.00	200.0	1600.0	370.0
Կապան								120.0	2000.0	330.0
Մեղրի								400.0	4240.0	825.0
Սիսիան						1	2.45	90.0	1500.0	300.0
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր						3	0.88	260.0	4000.0	1850.0
Վայք						3	0.59	120.0	3400.0	810.0
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ						2	0.34	100.0	2000.0	550.0

Իջևան								530.0	4000.0	1100.0
Նոյեմբերյան								100.0	8340.0	670.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2004թ. մարտին, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 220 առուվաճառքի գործարքներ, որից 27-ը՝ աճուրդային վաճառքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 քմ մակերեսի հաշվարկով.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի առուվաճառքների				
	Ֆանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Ֆանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						24	20120.0	250.0	8000.0	2500.0
Ապարան						1	2250.0	250.0	1400.0	340.0
Թալին								100.0	800.0	130.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	20	21650.0	230.0	2705.0	1454.0	17	17986.2	300.0	5000.0	770.0
Մասիս						30	25860.0	300.0	10000.0	910.0
Վեդի						10	10340.0	250.0	2200.0	560.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						9	7737.0	300.0	5000.0	880.0
Բաղրամյան						1	1200.0	180.0	600.0	210.0
Վաղարշապատ						19	25295.0	300.0	10000.0	1380.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						3	2092.0	300.0	2000.0	560.0
Ճամբարակ								100.0	300.0	140.0
Մարտունի						4	5190.0	200.0	600.0	250.0
Սևան	6	6800.0	100.0	155.0	130.0			200.0	2000.0	250.0
Վարդենիս								100.0	300.0	120.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի								150.0	600.0	210.0
Գուգարք								150.0	5200.0	700.0
Սպիտակ						1	1840.0	140.0	900.0	170.0
Ստեփանավան								100.0	600.0	160.0
Տաշիր								100.0	300.0	135.0
<b>Վոտայքի մարզ</b>										
Աբովյան	1	406..0	920.0	920.0	920.0	19	18668.0	300.0	8000.0	1620.0
Եղվարդ						42	49740.0	300.0	8000.0	1800.0
Հրազդան						3	3380.0	300.0	5200.0	1450.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						5	3600.5	250.0	3400.0	360.0
Ամասիա								100.0	300.0	135.0
Անի								150.0	400.0	185.0
Աշոցք								90.0	300.0	110.0
Արթիկ						2	730.0	150.0	900.0	200.0
<b>Սյունիքի մարզ</b>										



Գործիս							150.0	1200.0	380.0
Կապան							150.0	1400.0	410.0
Մեղրի							150.0	900.0	230.0
Սիսիան					1	1200.0	150.0	900.0	240.0
Վայոց Ձորի մարզ									
Եղեգնաձոր					2	2000.0	150.0	2200.0	310.0
Վայք							170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ									
Բերդ							100.0	1400.0	170.0
Իջևան							150.0	2200.0	570.0
Նոյեմբերյան							100.0	1400.0	210.0

2004թ. մարտին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 23 գործարքներ 26.39 հա ընդհանուր մակերեսով, այդ թվում 10-ը՝ Արարատի /3.08 հա/, 2-ը՝ Արմավիրի /3.00հա/, 5-ը Շիրակի /3.89 հա/, 1-ը Վայոց Ձորի /0.08 հա/ և 5-ը Տավուշի /16.35 հա/ մարզերում:

2004թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 831 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 37.4%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. փետրվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 30.7%-ով, իսկ 2003թ. մարտի համեմատ՝ 2.2 անգամ:

2004թ. մարտին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 57 բնակարանների, 30 անհատական բնակելի տների, 227 հասարակական, 29 արտադրական նշանակության օբյեկտների, 485 միավոր հողերի և 3 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

2004թ. մարտին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 31 վարձակալության գործարքների քանակները, 2004թ. փետրվարի համեմատ, աճել են 72.2%, իսկ 2003թ. մարտի համեմատ՝ նվազել 61.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. մարտին հանրապետությունում վարձակալվել են 2283.71 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 11.49 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 2169.63 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 40.13 հա բնակավայրերի, 42.92 հա արդյունաբերական օբյեկտների, 2.15 հա անտառային, 17.00 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 0.39 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ ծավալներ են արձանագրվել Արագածոտնի մարզում՝ 584.88 հա, որից 583.03 հա գյուղատնտեսական նշանակության: 2004թ. մարտին համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 645.00 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2004թ. մարտին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	1	70.00	64	513.03
Արարատ	5	490.00	41	49.61

Արմավիր	0	0.00	17	428.39
Գեղարքունիք	1	85.00	28	158.24
Լոռի	0	0.00	21	87.87
Կոտայք	0	0.00	23	73.68
Շիրակ	0	0.00	52	51.29
Սյունիք	0	0.00	22	125.12
Վայոց Ձոր	0	0.00	3	0.65
Տավուշ	0	0.00	7	36.76
<b>Ընդամենը</b>	<b>7</b>	<b>645.00</b>	<b>278</b>	<b>1524.64</b>

2004թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 729 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.5%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. մարտի համեմատ աճել է 82.3%-ով, իսկ 2004թ. փետրվարի համեմատ՝ 46.7%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 33.9%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /34.7%/, հողերի /25.0%/, հասարակական նշանակության օբյեկտների /21.3%/ և առանձնատների /15.2%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 295 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. փետրվարի համեմատ, աճել է 34.1%-ով, իսկ 2003թ. մարտի համեմատ՝ 59.5%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. մարտին հանրապետությունում գրավադրվել են 144.76 հա /այդ թվում 1.01 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 142.77 հա գյուղատնտեսական նշանակության: Հողեր առավել մեծ ծավալներ են գրավադրվել Արարատի մարզում՝ /54.39 հա/, որից 54.05 հա գյուղատնտեսական նշանակության:

2004թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 22 և 6 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.3%: 2003թ. մարտի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը մնացել է անփոփոխ, իսկ 2004թ. փետրվարի համեմատ նվազել է 6.7%-ով: 2004թ. մարտին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 21.4%:

2004թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1508 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2003թ. մարտի համեմատ աճել է 2.3 անգամ, իսկ 2004թ. փետրվարի համեմատ՝ 23.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /41.4%/:

### **ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն**